

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ  
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ  
Ա. ԱՆՏՈՆՅԱՆԻՆ, Ս. ԱՊՐԵՍՅԱՆԻՆ, Դ. ԶԱԽԱՐՅԱՆԻՆ**

Ի պատասխան ձեր **30.09.2019թ. հ.01/354** գրության՝ տեղեկացվում է, որ Երևան քաղաքի ավագանու **23.09.2009թ. հ.2/2-5** որոշմամբ հաստատված «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) կանոնադրության **1.3** կետով՝ կազմակերպության հիմնադիրը Երևան համայնքն է՝ ի դեմս Երևան քաղաքի ավագանու, իսկ հիմնադրի կողմից, որպես համայնքային կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված համայնքային մարմին, հանդիսանում է Երևանի քաղաքապետը, որի ենթակայությանն է հանձնված Կազմակերպությունը:

Նույն կանոնադրության **2.1** կետով սահմանված՝ Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակի՝ վայրի կենդանիների պահպանման և անհետացող տեսակների բազմացման դրույթներն առնչվում են բնապահպանության բնագավառին:

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի **64**-րդ հոդվածի՝ բնապահպանության բնագավառում քաղաքապետն իրականացնում է հետևյալ պարտադիր և պատվիրակված լիազորությունները.

- իրականացնում է Երևանի սեփականություն համարվող հողերի պահպանությունը հողատարումից, ողողումներից, ճահճացումից, քիմիական, ռադիոակտիվ նյութերով և արտադրական թափոններով աղտոտումից.
- իրականացնում է շրջակա միջավայրի պահպանության համայնքային ծրագրեր.
- իրականացնում է Երևանի սեփականություն համարվող հողերում բույսերի հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի աշխատանքները.
- բնապահպանության ոլորտի պետական կառավարման մարմնի հետ համաձայնեցնելուց հետո Երևանի ավագանուն է ներկայացնում յուրաքանչյուր տարվա համար Երևանի բնապահպանությանն ուղղված անհրաժեշտ միջոցառումների ցանկը և դրանց իրականացման ժամանակացույցը.
- իրականացնում է բնապահպանական պետական ծրագրերով նախատեսված աշխատանքները Երևանի տարածքում.
- աջակցում է Երևանի տարածքում գտնվող արգելոցների, արգելավայրերի հատուկ պահպանվող գոտիների պահպանությանը և օգտագործմանը, այդ տարածքներում որսագողության, ապօրինի ձկնորսության, ծառահատումների դեմ կազմակերպվող միջոցառումների իրականացմանը:

Վերոգրյալից բխում է, որ Կազմակերպության՝ վայրի կենդանիների պահպանման և անհետացող տեսակների բազմացման գործունեության առարկան չի առնչվում Երևանի քաղաքապետի՝ բնապահպանության բնագավառում իրականացվող լիազորություններին և գործառույթներին, ուստի՝ Կազմակերպության գործունեության համակարգման փոխանցումը Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչությանը նպատակահարմար չէ:

Մյուս կողմից, «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի համաձայն, կենդանաբանական այգիների կենդանի հավաքածուները գիտական, մշակութային, գեղագիտական արժեք ունեցող կենդանաբանական հավաքածուներ են և, ըստ այդմ, կենդանաբանական այգիների գործունեությունն ունի առավելապես մշակութային, ժամանցային և կրթադաստիարակչական բնույթ:

Միաժամանակ տեղեկացվում է, որ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ համայնքի մշակութային կյանքի կազմակերպումը համայնքի պարտադիր խնդիրն է և, ըստ այդմ, «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի գործունեության համակարգումն աշխատակազմի մշակույթի վարչության կողմից առավել նպատակահարմար է:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ**